ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջան Աստանայում
/2009 թ. նոյեմբերի 19-21/

2009 թվականի նոյեմբերի 19-21-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացավ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի հերթական նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցելու նպատակով Աստանա էր մեկնել ՄՀՄԻ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը:

Նիստերում քննարկվող հիմնական թեմաներն էին ինստիտուտի 2009 թվականի աշխատանքային արդյունքների ամփոփումը, իրականացված կարեւորագույն ծրագրերը, ինչպես նաեւ՝ 2010-2016 թթ. զարգացման պլանը, ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները:

Լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջանում հաստատվեց ՄՀՄԻ 7-ամյա զարգացման պլանը, հավանություն տրվեցին 2010 թ. միջազգային համագործակցության, նոր գործընկեր-պետությունների ներգրավման ծրագրերին:

Նստաշրջանի ընթացքում հաստատվեց նաեւ 2010 թվականի ինստիտուտի ընդհանուր բյուջեն՝ 82.912 մլն ԱՄՆ դոլլար:

Նոյեմբերի 20-ին նստաշրջանի ընթացքում կազմակերպվեց նաեւ Կլոր սեղան՝ «Գիտության, կրթության, ինովացիայի ինտեգրումը՝ հաստատուն զարգացման գրավական» թեմայով: Հերթական նստաշրջանը որոշվեց անցկացնել 2010 թվականի մարտի 25-26-ը: